Երկրորդ ընթերցում

(Լրամշակված նախագիծ)

Կ-958-05.11.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 14-րդ կետը շարադրել հետևալ խմբագրությամբ.

«14) սննդամթերքի հիգիենային, ինչպես նաև սննդամթերքի առանձին տեսակների հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների հաստատումը.»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով .

«8.1 Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցները հաստատվում են սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի իրավական ակտով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 15-րդ և 16-րդ կետերում «ամսաթիվը» բառից հետո լրացնել «և տեղեկատվություն՝ կենդանու բուծման երկրի մասին» բառերը.

2) 17 -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) սպանդից գոյացած մթերքի վերամշակման դեպքում՝ կիսապատրաստվածքի և մսամթերքի մեջ նաև մսի տեղական արտադրության կամ կենդանու բուծման երկրի, սպանդանոցային ծագման և (կամ) ներմուծված լինելու մասին տեղեկատվությունը՝ բաղադրության մեջ տեղական արտադրության կամ ներմուծված մսի համամասնությամբ:»:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ներդրված ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և հաստատված պլանը՝ սննդամթերքի արտադրություն իրականացնող և հանրային սննդի ծառայություն մատուցող սննդի շղթայի օպերատորների դեպքում:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:

2) Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

3) Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) ~~սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային, հիգիենիկ և սննդային արժեքին ներկայացվող պահանջների հաստատումը.~~ սննդամթերքի հիգիենային, ինչպես նաև սննդամթերքի առանձին տեսակների հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների հաստատումը.»:

~~2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 22.7 րդ կետով.~~

~~«22.7) սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների հաստատումը.»:~~

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8 .1-ին մասով .

«8.1 Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցները հաստատվում են սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում

Կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի իրավական ակտով:»:

Հոդված ~~2.~~ 3 Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի~~-~~ում՝

1) 15-րդ և 16-րդ կետերում «ամսաթիվը» բառից հետո լրացնել «և տեղեկատվություն՝ կենդանու բուծման երկրի մասին» բառերը~~÷~~.
2) 17 -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) սպանդից գոյացած մթերքի վերամշակման դեպքում՝ կիսապատրաստվածքի և մսամթերքի մեջ նաև մսի տեղական արտադրության կամ կենդանու բուծման երկրի, սպանդանոցային ծագման և (կամ) ներմուծված լինելու մասին տեղեկատվությունը՝ բաղադրության մեջ տեղական արտադրության կամ ներմուծված մսի համամասնությամբ:»:

Հոդված ~~3~~ 4**.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ~~ներդրված ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և հաստատված պլանը:»:~~ ներդրված ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և հաստատված պլանը՝ սննդամթերքի արտադրություն իրականացնող և հանրային սննդի ծառայություն մատուցող սննդի շղթայի օպերատորների դեպքում:»:

Հոդված~~4~~ 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1~~.~~) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:

2~~.~~) Սույն օրենքի ~~3~~4-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

3~~.~~) Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-958-05.11.2024-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «օրենքի» բառից հետո առաջարկում ենք լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» արտահայտությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի մյուս հոդվածներում հիշատակվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի կրճատ անվանումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը առաջարկում ենք խմբագրել, քանի որ	Ընդունվել է: Կատարվել է	Ընդունվել է:

			սննդամթերքի առանձին տեսակների հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջները դուրս էր մնացել, իսկ սանիտարահամաճարակայի ն հսկողության ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակայի ն, ինչպես նաև սննդային արժեքին ներկայացվող պահանջները անհրաժեշտ է հանել, քանի որ այն արդեն իսկ կարգավորված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի «Մաքսային միությունում սանիտարական միջոցների կիրառման մասին» N 299 որոշմամբ, որը ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի N 1009-Ն որոշմամբ գործողության մեջ է դրվել: Վերը նշվածի համատեքստում նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը հանել նախագծից, քանի, որ այն միավորվել է նախագծի	համապատաս խան փոփոխությունը	

			1-ին հոդվածի 1-ին մասում:		
	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող անվտանգության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ և 16-րդ կետերում կատարվող լրացումը և Նախագծին կից ներկայացված հիմնավորումը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք համանման լրացում կատարել նաև Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետում: Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ և 16-րդ կետերում նախատեսվում է տեղական արտադրության մսի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելիս նաև ներառել կենդանու բուծման երկրի մասին տեղեկատվությունը: Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետում սպանդից գոյացած մթերքի վերամշակման դեպքում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			կիսապատրաստվածքի և մսամթերքի մեջ ներմուծված մսի հետ միասին նախատեսվում է տեղեկատվություն տրամադրել տեղական արտադրության մսի վերաբերյալ: Ուստի առաջարկում ենք համապատասխանաբար լրացում նախատեսել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետով տեղական արտադրության մսի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգում, ինչպես Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ և 16-րդ կետերում, որոնցում լրացում Նախագծով նախատեսվել է:		
	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2028	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 356-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5.2-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցների հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծը, սակայն շահագրգիռ մարմինների կողմից մերժվել է, քանի որ վերջինս չունի համապատասխան լիազորող նորմ: Այս համատեքստում իրավական որոշակիության սկզբունքից ելնելով՝ առաջարկում ենք նախագծում կատարել նոր լրացում՝ սահմանելով		

			համապատասխան լիազորող նորմ, որպեսզի սննդամթերքի անվտանգության ոլորտում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հնարավոր լինի հաստատել վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցները, որոնք իրազեկման առումով անհրաժեշտ են սննդամթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների համար, ինչպես նաև կապահովվի ռազմավարությամբ հաստատված N 2 հավելվածի 5.2-րդ կետի կատարումը: Նախագծում լրացումը նախատեսվում է 2-րդ հոդվածում, հետևաբար այս համատեքստում կփոփոխվի հոդվածների համարակալումը: Ըստ այդմ, առաջարկում ենք օրենքի 8-րդ հոդվածը		

			լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով. **Հոդված 2.** «8.1 Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցները հաստատվում են սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի իրավական ակտով:»:		
	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Հաշվի առնելով, որ ներմուծող կամ իրացման կազմակերպությունների համար օրենսդրությամբ սահմանված չէ, որ պետք է ունենան ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա ներդրված համակարգ, հետևաբար առաջարկում ենք սննդի շղթայի օպերատորների բազա գրանցվելու ժամանակ միայն սննդամթերքի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			արտադրություն իրականացնող և հանրային սննդի ծառայություն մատուցող տնտեսավարողները ներկայացնեն ներդրված ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված տեղեկատվություն և հաստատված պլան: Այս համատեքստում նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6) ներդրված ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և հաստատված պլանը՝ սննդամթերքի արտադրություն իրականացնող և հանրային սննդի ծառայություն		

			մատուցող սննդի շղթայի օպերատորների դեպքում:»:		
	Կառավարություն	Նախագծի5-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք սույն պահանջը ապահովել Նախագծի ողջ տեքստում՝ միասնական մոտեցմամբ, քանի որ Նախագծի 1-3-րդ հոդվածներում արաբական թվանշանները տեքստից առանձնացված են	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			փակագծերով, իսկ 4-րդ հոդվածում կետերով: Նախագծում կատարվել է լրացում և այս համատեքստում 4-րդ հոդվածի համարակալումը փոփոխվել է՝ 5-րդ հոդվածի:		
	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք լրացնել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է: